ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2

ք. Երևան <<28>> <<մարտի>> 2017 թ.

<< արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1.1 հավելվածով նախատեսված պայմաններով, N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված **վառելանյութը** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **96 612 062 (իննսունվեց միլիոն վեց հարյուր տասներկու հազար վաթսուներկու)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Ապրանքի մատակարարման համար հիմք է հանդիսանում Մատակարարի կողմից տրված և Պատվիրատուի կնիքով հաստատված կտրոնը Պայմանագրի N 1.1 հավելվածով հաստատված ցանկով ընկերության ցանկացած լիցքավորման կայանին կամ ընկերության լիցքավորման կայանների բացակայության դեպքում ընկերության մատնանշած այլ կազմակերպության լիցքավորման կայանին ներկայացնելը:

6.2 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.3 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 /երկու/ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.4 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.5 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 /եռօրյա/ օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.6 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.7 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց

թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԻՆ	«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8	ք. Երևան, Ե.Կողբացու 30
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 01808789
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Գ. Հայրապետյան	Ցա. Խաչատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<< 28 >> << 03 >> 2017թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիրը
1.	Բենզին ռեգուլյար (կտրոններ)	լիտր	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ^3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 °C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ^3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C_5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:
2.	Բենզին պրեմիում (կտրոններ)	լիտր	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ^3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 °C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ^3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C_5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:

* Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Դավիթաշեն 4 թաղ. Ա. Միկոյան 109/8 հասցեով:

*Ապրանքի մատակարարման համար հիմք է հանդիսանում Մատակարարի կողմից տրված և Պատվիրատուի կնիքով հաստատված կտրոնը ընկերության ցանկացած լիցքավորման կայանին կամ ընկերության մատնանշած այլ կազմակերպության լիցքավորման կայանին ներկայացնելը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԻՆ ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011001352 ՀՎՀՀ 00153247 Աշխատակազմի ղեկավար՝ Գ. Հայրապետյան /ստորագրություն/ Կ.Տ.	«ՖԼԵՇ» ՍՊԸ ք. Երևան, Ե.Կողբացու 30 «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 15100166690902 ՀՎՀՀ 01808789 Տնօրեն Յա. Խաչատրյան /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 1.1
<<28>> <<03>> 2017 թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 ծածկագրով գնման պայմանագրի

<<ՖԼԵՇ>> ՍՊԸ-Ի ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Լցակայանների գտնվելու վայրը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
	ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ	
1	ք.Երևան, Կենտրոն համայնք, Մ. Խորենացու մ-112	Վարձակալություն
2	ք.Երևան, Ավան համայնք, Ավանի խճուղու աջակողմյան մաս	Սեփականություն
3	ք.Երևան, Ավան Աճառյան փող. թիվ 1/1շ.	Սեփականություն
4	ք.Երևան, Արաբկիր համայնք, Կոմիտասի պող. թ. 60/10	Վարձակալություն
5	ք.Երևան, Ն. Զարյան փող թիվ 22	Վարձակալություն
6	ք. Երևան, Աջափնյակ, Աշտարակի խճ. հ 61	Սեփականություն
7	ք.Երևան Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիայի 161	Սեփականություն
8	ք.Երևան Մալաթիա-Սեբաստիա համայնք, Լենինգրադյան փող. հ. 33/5	Վարձակալություն
9	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Անդրանիկի 113/1	Վարձակալություն
10	ք.Երևան, Էրեբունի համայնք, Արցախի փող. 42/1	Սեփականություն
11	ք.Երևան, Էրեբունի վարչ. շրջան, Գ. Մահարի 1/3շ.	Վարձակալություն
12	Ք. Երևան, Նոր Նորք համայնք, Վախթանգովի փող. 2/2	Սեփականություն
13	ք.Երևան, Շենգավիթ համայնք, Արշակունյաց 210	Սեփականություն
14	ք. Երևան, Եղվարդ մայրուղու աջ կողմ N 24 դեպոի մոտ	Վարձակալություն
15	ք. Երևան Կենտրոն, Վարդանանց փողոց 109/2	Վարձակալություն
16	ք. Երևան, Կենտրոն, Իսակովի պողոտա թիվ 13	Վարձակալություն
17	ք. Երևան, Ավան, Ռուբինյանց փողոց թիվ 31	Վարձակալություն
18	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Գոգոլի փողոց 24/20	Վարձակալություն
19	ք. Երևան, Աջափնյակ Մարգարյան փողոց 29/3	Վարձակալություն
20	Ք. Երևան, Աջափնյակ համ. Հալաբյան փող. վերջնամասում	Վարձակալություն
22	ք. Երևան, Շենգավիթ, Արտաշիսյան փողոց 77/5	Վարձակալություն
23	ք. Երևան, Դավիթաշեն, Տ. Պետրոսյան փողոց 1/4	Վարձակալություն
24	ք. Երևան, Բագրատունյաց 42 շենքի դիմաց	Կտրոնների սպասարկում
25	ք. Երևան, Շիրազի 11/1	Կտրոնների սպասարկում
26	ք. Երևան, Բաբաջանյան 72	Կտրոնների սպասարկում
27	ք. Երևան, Տիգրան Մեծ 36/1	Կտրոնների սպասարկում
28	ք. Երևան, Սասնա Ծռեր 1/3	Կտրոնների սպասարկում
29	ք. Երևան, Ազատության 26/3	Կտրոնների սպասարկում
30	ք. Երևան Իսակովի 32/1	Կտրոնների սպասարկում
31	ք. Երևան, Մկոյան 9/3	Կտրոնների սպասարկում
32	ք. Երևան , Սեբաստիա 96/1	Կտրոնների սպասարկում
33	ք. Երևան, Իսակովի 14/2	Կտրոնների սպասարկում
34	ք. Երևան, Մյասնիկյան պող. 20/1	Կտրոնների սպասարկում
35	ք. Երևան, Դավիթ Բեկի փող. 83	Վարձակալություն
36	ք. Երևան, Հ. Հակոբյան – Ա. Խաչատրյան փողոցների հատման կետ	Վարձակալություն
37	ք. Երևան, Շիրազի փողոց հ. 2/6	Վարձակալություն
38	ք. Երևան, Գայի պ. 34/1	Կտրոնների սպասարկում
39	ք.Երևան, Աղբյուր Սերոբի փ. 2Ա 18	Կտրոնների սպասարկում
40	ք. Երևան,Դավիթ Բեկի 83/9	Կտրոնների սպասարկում

	ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ	
41	ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա	Սեփականություն
42	Պռոշյան համայնք, Գևորգ չաուշի խճուղի թիվ 1/15	Սեփականություն
43	Արզնի համայնք, 4-րդ թաղ., թիվ 89 շենք շիննությունների 2-ը և 4-ը	Վարձակալություն
44	ք. Աբովյան, Երևանյան փողոց 1/92	Վարձակալություն
45	գ. Գետամեջ, 2-րդ փողոց թիվ 17	Վարձակալություն
46	ք. Չարենցավան,, Շահումյան փողոց N 1	Վարձակալություն
47	ք. Աբովյան, Սահմանադրության հրապարակ	Կտրոնների սպասարկում
48	ք. Չարենցավան, Շահումյան փող.	Կտրոնների սպասարկում
49	գ. Արամուս	Կտրոնների սպասարկում
50	Ք. Ծաղկաձոր, Չարենցի 33	Կտրոնների սպասարկում
51	ք.Աբովյան, 11-րդ փողոց թիվ 12	Վարձակալություն
	ՀՀ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶ	
52	Մասիս համայնք, ք. Էջմիածնի խճուղի 1	Վարձակալություն
53	ք. Արտաշատ, Մրգավան համայնք	Վարձակալություն
54	ք. Մասիս, Երևանյան խճ.	Կտրոնների սպասարկում
55	ք. Վեդի, Արարատյան 88	Կտրոնների սպասարկում
56	գյուղ Մխչյան	Կտրոնների սպասարկում
57	ք. Արարատ, Աղբյուր Սերոբ	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ	
58	Արմավիր ք., համայնք, Երևանյան փողոց 15/9	Վարձակալություն
59	Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին-Երևան 2 խճուղի-2	Վարձակալություն
60	Երասխ-Երևան մայրուղի 10/1	Կտրոնների սպասարկում
61	գ. Նորապատ, 2-րդ փողոց, տուն 8	Կտրոնների սպասարկում
62	Երևան-Վաղարշապատ խճուղի	Կտրոնների սպասարկում
63	ք. Երևան Երևան-Էջմիածին խճուղի	Կտրոնների սպասարկում
64	ք. Երևան Երևան-Էջմիածին խճուղի N 2	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	
66	ք. Վանաձոր, Հյուսիսային փողոց թիվ 8	Վարձակալություն
67	ք. Տաշիր, փ. Կիրովի թիվ-136	Վարձակալություն
68	ք. Ստեփանավան, Բաղրամյանի վերջնամաս	Վարձակալություն
69	ք. Վանաձոր, Դեմիրճյան փողոց թիվ 1բ	Վարձակալություն
70	Գ. Ձորագետ	Վարձակալություն
	ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	
71	ք. Գորիս, Երևանյան խճուղի թիվ 8	Վարձակալություն
72	ք Գորիս, Արցախյան խճ. 4	Կտրոնների սպասարկում
73	ք. Կապան,Հունան Ավետիսյան վերջնամաս	Կտրոնների սպասարկում
74	ք. Կապան, Սպանդարյան փողոց	Կտրոնների սպասարկում
75	ք. Կապան Գործարանային 1/1	Կտրոնների սպասարկում
76	ք. Կապան, գյուղ Սյունիք	Կտրոնների սպասարկում
77	ք. Մեղրի, Գործարարների փողոց 12	Վարձակալություն
78	Շաքի, Գորիս խճուղու խաչմերուկ	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ	
79	ք. Իջևան, գ. Գետահովիտ, 16 փող. Թիվ 44/1	Վարձակալություն
80	ք. Դիլիջան, Կամոյի 3 փակուղի, 4Ա	Կտրոնների սպասարկում
81	ք. Բերդ, Մաշտոցի 1ա	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	
82	ք. Գավառ, Հացառատ թաղ.	Կտրոնների սպասարկում
83	ք. Սևան, Գործարանային 1/4	Կտրոնների սպասարկում
84	գ. Նորատուս	Կտրոնների սպասարկում
85	ք. Կարմիր, Սպետեմբերի 21 բն 22	Կտրոնների սպասարկում
86	ք. Գավառ Հացառատ թաղամաս	Կտրոնների սպասարկում
87	ք. Գավառ, Պետրոսյան 61	Կտրոնների սպասարկում
88	Երևան-Սևան մայրուղի 12 կմ	Կտրոնների սպասարկում
89	Սևան-Գավառ մայրուղի 9-րդ/մ	Կտրոնների սպասարկում

90	ք. Վարդենիս, Բեռնագործների փող.	Կտրոնների սպասարկում
91	ք. Մարտունի, Կամոի 10	Կտրոնների սպասարկում
92	Ք. Սևան, Նայիրյան ու Շինարարներ փողոցների խաչմերուկ	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ	
93	Ջերմուկի խճուղի 57/1	Կտրոնների սպասարկում
94	ք. Եղեգնաձոր, Երևանյան խճուղի 1	Կտրոնների սպասարկում
95	ք. Վայք, Ջերմուկի խճուղի	Կտրոնների սպասարկում
96	Երևանյան խճոիղի	Կտրոնների սպասարկում
97	Ք. Վայք Ջերմուկի խճուղի 83/85	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	
98	Ք. Գյումրի, Երևանյան խճ. 4/4	Կտրոնների սպասարկում
	ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ	
99	ք. Աշտարակ, Տիգրան Մեծի փողոց	Կտրոնների սպասարկում
100	ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 93	Կտրոնների սպասարկում
101	ք. Ապարան, Բաղրամյան 62/1	Կտրոնների սպասարկում

*Մատակարարը պետք է ունենա լցակայաններ կից ներկայացվող հավելվածում 1.1 նշված համայնքներում կամ ներկայացվող հավելվածում (1.1) նշված հասցեներից առավելագույնը 5 կմ շառավղով հեռավորության վրա: Ապրանքի մատակարարման համար հիմք է հանդիսանում Մատակարարի կողմից տրված և Պատվիրատուի կնիքով հաստատված կտրոնը ընկերության ցանկացած լիցքավորման կայանին կամ ընկերության մատնանշած այլ կազմակերպության լիցքավորման կայանին ներկայացնելը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԻՆ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Ե.Կողբացու 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
Տնօրեն՝

Յու. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2
«28» «03» 2017թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է գնել 2017թ.								ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ	
				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը
1	Բենզին <<Ռեգուլյար>> (կտրոններ)	լիտր	335	60000	20,100,000	60000	20,100,000	70000	23,450,000	87800	29,413,000	277800	93063000
2	Բենզին <<Պրեմիում>> (կտրոններ)	լիտր	353	3000	1,059,000	3000	1,059,000	3000	1,059,000	1054	372,062	10054	3549062
Ընդամենը					21,159,000		21,159,000		24,509,000		29,785,062		96,612,062

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԻՆ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝
Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Ե.Կողբացու 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
Տնօրեն՝
Յա. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
<< 28 >> << 03 >> 2017թ. կնքված
N N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Տրանսպորտային նյութեր	21 159000	42 318000	42 318000	42 318000	66 827000	66 827000	66 827000	96 612062	96 612062	96 612062	**96 612062**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԻՆ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Ե.Կողբացու 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
Տնօրեն՝

Յա. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 4
<< 28 >> << 03 >> 2017թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<28>> <<03>> 2017թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն